

34, 8 լետարթեր բուրք յերկրմերի, միացե՛ք

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՀ ԼՈՒՍՖՈՂՎՈՄԱՏ

Պ Ե Տ Ա Կ Ա Խ Գ Ր Ա Պ Ա Լ Ա Տ


5810

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՄԵԾ
ԱՐՎԵՏՍԱԳԵՏ
ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ

1868-1936

ԱԿԹԵՑՈՒՆ

ՀԱՅՐԱՆԱՑԻՆ ՎԱՐԶ.



Պրոլետարիներ քուր յերկրների, միացե՛ք

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԴՈՂԿՈՄԱՏ

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Գ Ր Ա Պ Ա Լ Ա Տ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՄԵԾ

ԱՐՎԵՏՍԱԳԵՏ

A 1868-1936
ՄԱԿԱԿԱՆ ԳՈՐԿԻ

1868-1936



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԽՍՀ ԼԺԿ ԳՐԱԴԱՐԱՆԱՑԻՆ ՎԱՐԶ.

Կազմից՝ Ա. ԲԱԲԱՅԱՆ

Պատր. Խմբագիր՝ Դ. Հակոբյան
Տեխ. Խմբագիր՝ Ա. Բաբայան

20160



卷之三

ԼԵՆԻՆԸ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՄԱՍԻՆ

Գ Ո Ր Կ Ի ՞Ն

անտարակույս պրոլետարական
արվեստի խոշորագույն ներկա-
յացուցիչն է, վորը շատ բան է
արել նրա համար և դեռ շատ
բան կարող է անել :

Գ Ո Ր Կ Ի ՞Ն

իր մեծ գեղարվեստական յերկե-
րով ավելի ժան ամուր և կապել
իրն Ռուսաստանի և ամբողջ աշ-
խարհի բանվորական շարժման
հետ :

Գ Ո Ր Կ Ի ՞Ն

հեղինակություն է պրոլետարա-
կան արվեստի գործում, այդ ան-
վիճելի յե :

Գ Ո Ր Կ Ի ՞Ն

Կասկած չկա, վոր հսկա գեղար-
վեստական տաղանդ է, վորը
շատ ոգուտ է քերել և կրնրի հա-
մաշխարհային պրոլետարական
շարժմանը :

ՎՈՂԶՈՒՅՆՆԵՐ

ՄԱՅՍԻՄ ԳՈՐԿՈԽ ԴՐԱԿԱՆ-ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ 40-ԱՄՅԱ ՀՈՒՅԱՅԱՆԻ
ԱՌԹԻԿ,

ԸՆԿ. ԱՏԱԼԻՆԻ ՎՈՂԶՈՒՅՆՆԵՐ

Թամիկագի՞ն Ալեքսեյ Մաքսիմովիչ
Սրտած վողջունում էմ Զեզ և
պինդ սեղմում էմ Զեր ձեռքը : Ցան-
կանում էմ Զեզ յերկար կյանք ու
աշխատանք՝ ի ուրախություն բոլոր
աշխատավորների և ի սարսափ բան-
վոր դասակարգի բոլոր բշնամիների :

Ի. ԱՏԱԼԻՆ

«Խորհրդ. Հայաստ.»

1932, սեպտ. 26, № 225.

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՂԶՈՒՅՆՆԵՐ

«Համկ(Բ)Կ Կենտկոմը ջերմագին
վողջունում է պրոլետարական մեծ
գրող Մաքսիմ Գորկուն : Իր ականա-
վոր զեղարքեստական տոկողագոր-
ծություններով դասակարգ միլիոնա-
վոր մասսաների սեփականությունը,
Գորկին շամոր կապեց իրեն Առո-

սատուանի և ամբողջ աշխարհի քան-
փորտեան շարժման հետ» (Լենին) :
Մաքսիմ Գորկու ամուսնը քանիզ ու
մոռ է խորհրդային յերկրի աշխա-
տավորներին և այդ յերկրի սահման-
ներից շատ հեռու : Վորպես մեծա-
գույն գեղարվեստագետ հեղափոխա-
կանի ամուսնը, վորպես մարտուչողի
ցարիզմի դեմ, կապիտալիզմի դեմ,
միջազգային պրոլետարական հեղա-
փոխության համար . բոլոր յերկրնե-
րի աշխատավորներին կապիտալիզմի
լծից ազատելու համար» :

«Խորհրդ . Հայաստան»

1932. սեպտ. 26, № 225.

ԽՍՀՄ-ի ԺՌԴԿՈՄՆԵՐԸՆԴԻ

ՎՐԴՅԱՆԻՑՆԵՑ

«Գորկին հազարամոր քելերով
կապված լինելով Խորհրդային Միու-
թյան աշխատավորների և հեղափո-
խական այն պահ բարի հետ, վոր մր-
դում է բանվոր դասակարգը ցարա-
կան կալվածատիրական իշխանու-
թյան ու կապիտալիզմի դեմ, իր մեծ
տաղանդի բացառիկ ուժով ծառայում
է պրոլետարական հեղափոխության

հաղթանակին, սոցիալիստական կռւ
տուրայի գործին» :

«Հորհրդ. Հայաստ.»

1932, սեպտ. 26, № 225.

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԱՆՀԱՇՏ ԹՇՆԱՄՈՒՆ

«Քեզ՝ վորավես համաշխարհային
պրոլետարական գրականության հիմ
նադրին, կապիտալիզմի անհաշտ
թշնամուն, հակապատերազմական
կոնգրեսի կազմակերպիչներից մեկին,
սոցիալիստական հայրենիքի պաշտ-
պանին, պրոլետարիատի մտածողին
ու արվեստագետին, 40-ամյա փառա
հեղ գրական գործունեյության առ-
թիվ Ստալինի անվան Առաջին պետա-
կան ավտոգործարանի 20.000 ան-
դամից բաղկացած կոլեկտիվը հղում
ե իր բոցավառ պրոլետարական վող-
ջույնը . . .»

Մասկովայի ընկ. Ստալինի
անվ. Առաջին ոլետական ավտո-
գործարանի բանվորների վող-
ջույնից:

«Правда», 1932, № 266.

Համամիութենական կոմունիստական (բոլշևվիկների) կուսակցության կենտրոնական կոմիտեն և ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարների խորհուրդը խոր վըտով հայտնում են ռուսական մեծ գրող, Խոսքի հանճարեղ արվեստագետ, աշխատավորների անձնագոհ բարեկամ, կոմունիզմի հաղթանակի համար մարտնչող ընկեր ԱԼԵՔՍԵՅ ՄԱՐՏԻՆՈՎԻՉ ԳՈՐԿՈՒ մահը. վորը տեղի ունեցավ Գորկայում, Մոսկվայի մոտ, հունիսի 18-ին:

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄ

ԽՍՀՄ-Ի ԺՈՂԿՈՄԽՈՐՃ

«Խորհրդ. Հայաստ.»

20 Հունիսի, 1936, № 140.

Թող մեռած լինիս... Բայց հոգով արի քաջերի յերգում դու մի՛շտ կը մնաս կենդանի տիպար և հպարտ մի կոչ- դեպ ազատությունն ու դեպի լույսը :

Մ. ԳՈՐԿԻ, Բաղեյի յերգը

Գ Ո Ր Կ Ի Ն

— ի ս ս ք ի հ ա ն ձ ա ր ե զ
ա ր վ ե ս տ ա զ ե տ ե ր :

Գրականագետներին, խոսքի վարպետներին այդ սրբնակը ցույց է տալիս խոսքի ուժն այն ժամանակ, յերբ այդ խոսքը ծառայում է մարդու ու մարդկության յերջանկության համար մղվազ պայքարին, յերբ այդ խոսքը համեստ է մարդկանց ու ժողովարդների սրտին:

Գորկին— մ ե ծ յ ս զ ո վ ր դ ի
մ ե ծ զ ա վ ա կ ն ե ր :

Հասարակ մարդկանց, աշխատավորներին Գորկու որինակը ցույց է տալիս, վոր մեր ժողովուրդը, ինչպես և մյուս ժողովուրդները, հարուստ և պանծալի տաղանդներով, վորոնց անցյալում միայն բացառիկ գեղագքերումն եք հաջողվում զուրս սլրծնել դատարանի ձեռքից, և վորոնց համար այժմ աղաւտ ուղիյե բացվել դեպի բարդավաճումը, գեղի հաղթանակներն ու գեղի վառք :

Գորկին— ա չ խ ա տ ա վ ո ր ն ե-
ր ի տ ն ձ ն ա դ ո հ ս կ ո հ բ ա ր ե-
կ տ մ ն ե ր ո ւ կ ո մ ո ւ ն ի զ-
ժ ի չ ա մ ա ր ժ զ վ ո դ պ ա ր յ-
ք ա ր ի վ ո դ ե շ ն չ ո դ ր :

Կարիք կա^ծ, արդյոք տաղացույց-
ներ բերելու, վոր մարդկության լա-
վագույն զավակները, վորոնք հա-
սել են կուլտուրայի զաղաթներին ու
ժողովուրդների՝ իրենց յերջանկու-
թյան մասին ունեցած թաղնված յե-
րազանքների խորը բմբոնման, անձ-
նազոհ կերպով, առանց մնացորդի
իրենց բոլոր ուժելոր նվիրում են
կոմունիզմի գործին և դրա մեջ են
տեսնում իրենց բարձր դոհացումք:

Հենց միայն սա վկայում է այն
մատին, վոր կոմունիզմի դործն իր
բիւակառար հաղթանակի ճանապար-
հին ե:

Անինից հետո Գորկու մահն տ-
մենածանր կորուսան է մեր յերկրի
համար ու մարդկության համար:

Մեր ուժն այն է, վոր խորհրդա-
յին յերկրի ժողովուրդը, վորին նը-
վիրել եր Գորկին իր վող մեծ տա-

ղանդը, մեծ աիրտը, արդեն կանգնել և իր զորեղ վոտքերի վրա, առարեղ և ավել իր անսահման ուժերի ու առաջանդների աճմանը և դրանով իսկ հաղթականութեն մարմնավորում և կյանքում մարդկության լավագույն ներկայացուցիչների հայսերն ու յերազները:

Մինչև պերջին չունչը, Գորկին միևնույն զգացմունքներով ու միևնույն մտքերով և ապրում նրանց հետ, ովքեր այժմ այդպիսի խանդավառությամբ լենինի - Ստալինի կուսակցության ղեկավարությամբ, սոցիալիստական նոր հասարակություն են Վասուցուժ: Նրա աչքերը մինչև կյանքի վերջին որիթը վայըում եցին պայքարի և աշխատավորների թշնամիների, Փաշիստների, մյուս բոլոր հարստահարողների, կուլտուրան խեղգողների ու պատերազմի ճըձձիդների նկատմամբ անհաջողության կրակով: Մեր յերկրում աշխատավորների ճեռք բերած յուրաքանչյուրը չհաջողությամբ, ստախու-

նովականների հաջողություններով, կանանց շարժման նոր ձևերով, բերքի ու աշխատանքի արտադրողականության աճմամբ, թշնամու բանստրկությունների ու նենդությունների մերկացմամբ և յերկրի պաշտպանության ամրացմամբ ու առանձնապես մասսաների կուլտուրական աճմամբ, նաև հրճվում եր վորովես հրաբորբոք պատանի և վորապես իմաստուն հայր:

Բնկ. Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ
ճառից, արտասանված իՍՀ
Միության Ժողկոմխորհի և
Համեր(բ)կ կենտ. Կոմիտեյի կող-
մից Մոսկվայի Կարմիր հրա-
պարակում, Ա. Մ. Գորկու
հիշատակին նվիրված ոգո մի-
տինդում, 20 հունիսի 1936 թ.

«Խորհրդ. Հայաստ.»

1936, № 142

Գ Ո Ր Կ Ի Ն

— իսսքի հանձարեղ
տը զեւսուադ:

Նրա զբքերում ու յերգերում
կերտված պատկերները հասել են
և հասնում են տասնյակ միլիոնա-
վոր մարդկանց զգացմունքի ու զի-
տակցության ամենախոր ծալքերին:
Գորկու պատկերած մարդիկ կար-
ծես կենդանի կանդնած են յուրա-
քանչյուրի աչքի առջե, ով թեկուղ
մի անդամ կարդացել և նրա ստեղ-
ծալործությունները: Նա ունեի
արծվի սրատես աչք, ինչպիտին
որատմությունը տալիս և արմեատա-
գետին հարյուր տարին մի անդամ:
Նրա յերկերի լեզուն պաղող և և ժո-
ղովրդակիան, ինչպես կարող է վսե-
մորեն պարզ լինել միայն պատմու-
թյան ընտրյալ զրողի լեզուն: Նա
կարողանում էր հրաշալիորեն տես-
նել և հանճարինորեն պարզ, զեղար
վեստական ձեռվ ընդհանրացնել իր
տեսածը, հաղորդել ժողովրդական
մասաւյին այնպես, ուր սեր ու տ-
տելություն վառի նրա մեջ դեպի

իր ստեղծագործությունների հերոս
ները :

Շրջապատված լինելով ամբողջ
խորհրդային ժողովքի և բոլոր աշ-
խառավորների սիրով, վորոնց անձ-
նուրաց բարեկամն է յեղել նա, Ա-
լեքսեյ Մաքսիմովիչը մինչև իր վելք
ջին չունչը մնաց վորովես Մաքսի-
Ենդելսի - Լենինի - Ստալինի դործի
բոցաշունչը ու հավատարիմ մար-
տիկը, կոմունիզմի մաքտիկը, մեր
եպօթայի շատ զբական անմահ հի-
շատակարանների նախաձեռնողն ու
ստեղծագործողը :

«Պրավդայի» 1936 թ. Հու-
նի 19-ի «Պրոլետարիատի մեծ
արվեստագետը» առաջնորդու-
թից :

«Խորհրդ. Հայաստ.»
1936 № 141.

Գ Ո Ր Կ Ի Ն

Խոսքի համաշխարհային արվեստագետներից առաջինը, մեծագույնն էր, վորը ճանապարհ էր հարթում պրոլետարական հեղափոխության համար, վորը նվիրաբերել էր նրան իր ուժերը, իր փառքի հեղինակությունը և կյանքի ձոխ փորձը, մի մարդու, վորը մանուկ հասակից ճաշակել էր ստրկացված պրոլետարիատին վիճակիած աղքատությունն ու անարդանքը. Դանտելի նկան, Գորկին դուրս յեկավ գժոխքից, ըայց նա միայնակ դուրս՝ ~~չնկատվ~~ այնտեղից: Նա իր հետ տարհնելն նա փրկեց տառապանքի իր ընկերներին:

Վոչ մի մեծ գրող ավելի բարձր դեր չի խաղացել: Գորկին ԽՍՀՄ-ում զերագույն դեկավարն էր զբականության, արվեստի ու գիտության: Նա նրանց առաջնորդն էր, նրանց պահանջկոտ հսկիչը, նրանց պաշտպանը:

Նա իր լայն միտքը և իր անհուն բարությունը տվել էր խորհրդացին

կառավարությանը, վորս խորապես
հարգում եր նրան և վորի առաջնորդ-
ները նրա սիրելի բարեկամներն ե-
լին :

Ետ վախճանվեց Հենց այն պահին,
յերբ ավարտվեց խորհուրդների հաղ
թանակը պսակող զործը՝ հոյակապ
սահմանադրությունն ստեղծելու դոր
ծր, ամենամարդկայինը և ամենաս-
պառն այն բոլորից, վորս յերրեիցե
ունեցել և վորեե ժողովուրդ :



A 1
8446

Գորկին ալլուլետարական գրակա-
նության զարդն ու պարծանքն ե :

Ս. Շահումյան

ԱԼԵՔՍԵՅ ՄԱՔՍԻՄՈՎԻՉ

Գ Ո Ր Կ Ի

(Համառոտ կենսագրություն)

Պրոլետարական մեծ դրոշ Ալեքս-
անդ Մաքսիմովիչը Գորկին ծնվել է
1868 թվականի մարտի 16-ին (Հին
տոմարով)։ Նիժնիյ Նովգորոդում։

Գորկին մեծանում եր իր պատի
Նիժնիյ Նովգորովի փոքր ներկա-
տան տիրոջ մոտ։ Նրա պատը, կա-
շիրինը «մարդ եղ գալաք» բուրլակ
ներից։ Բայց շուտով՝ անհաջողու-
թյան հանդիպեց և գլուխովին քայ-
քայվեց։

Գորկուն ևս 10 տարեթիւն հասա-
կից սւզարկում Շենքամարդ դառնա-
լու։ Սկզբում նա ծառայում է կոչ-
կեղենի խանութում վորպես աշ-
կերտ, ապա զծաղրիչի մոտ վնրպես
աշկերտ, վորտեղ նա փոխարինում
եր և՛ զոնապանին, և՛ զայտկին, և՛
սպասուհուն։

Սակայն շահագործման այդ ծանր
պայմաններում, Գորկին ճանապարհ

Հարթեց իր համար դեպի գիրքը և
նրանում տառջացած կարգավոր ուենչն
անսահման հաճայքը ու բարձաթիվ
ծանր զիրտիւրանքներ բերեց նրան:
Քաղքենիների տանը զիրքը հալած-
վում եր փորպես մնասակար դրազ-
մունք :

Այսուհետեւ Գորկին ծառայում է
չորենավում փորպես խոհարարի աշ-
կերտ, սրբազնակերների խանութում
փորպես զործակատար, սրբանկարչու-
թյան արհեստանոցում փորպես աշ-
կերտ, կազալասուների մոտ փորպես
տոսնազետ, տոնավաճառի թատրո-
նում փորպես ստատիստ :

Նա փորոշում է թողնել Նիժնին և
կազան ուղեսրվել, զաղտնի հույս
փայփայելով, թե իր համար ճանա-
պարհ կհարթի դեպի ուսումը: Նա
յերազում եր կազանի համալսարա-
նի մասին:

Կազան զալուց հետո, պարզվում է,
վոր համալսարանի մասին մտածելն
անդամ ավելորդ և: Դարձյալ ոկրս-
վում են զոյտթյան միջոցների հու-
սակտուր փորոշումներ: Գորկին աշ-
խատում է նավահանգստում վոր-

սկեռ ազոցով ու բեռնակիր ու ապ-
րում և «բոսյակների» հետ, մարդիկ,
վորոնք հետաքրքրում են նրան վւ-
րենց թշնամական վերաբերմունքով
գեղի քաղքենիական, կողեկանոց
կենցաղը և իրենց անհոգ վերաբեր-
մունքով գեղի սեփական բարեկեցու-
թյունը :

Կտպանում նա բաղխախում և նաև
իր համար մի նոր միջավայրի հետ՝
կտպանի սագիկալ տրամադրություն-
ներով համակված յերիտասարդու-
թյան, զիխավորապես ուսանողների
հետ։ Գորկին ներկա յէ լինում նրանց
աղմկալից հավաքույթներին և լավ
չի հասկանում նրանց վեճերը։ Սա-
կայն նա հասկանում և մի բան՝ կան
մարդիկ, վորոնք սկատրաստվում են
կյանքը գեղի լավը փոխելու։

Փոխել կյանքը գեղի լավը—դրան
գորկին ուզում եր ձեռնամուխ լինել
անմիջապես։ Աշխատանքի մանելով
հրուշակեղենի արհեստանոցը՝ աշխա-
տանքի հրեշային պայմաններով նա
փորձում է ոգտվել բանվորների զայ-
րույթից և կաղմակերպել գործադու-
յի նման մի բան։

Այդահեղ անհաջողության հանդիպելով Գորկին հեռանում և արհեստանոցից, նորից թափառում և, անցնելով տեղից-տեղ, նորից՝ աշխատում և վորագես բեռնակիր, ծառայում և վորագես պարտիզան ու դրոնացան, մանում և անդրեսլրենյորի մոտ վորագես խմբի յերդիչ։ Մարդկանցից կարգած լինելը, միայնակությունը, կյանքի խճճվածությունը պատահնի Գորկուն հասցնում են ինքնասպանության վորձի դուռը։ Բարերախտաբար, կրծքին ուղղված զնդակը մահացու չեր և Գորկին առողջացավ «յերկար, համառ կյանքի համար»։

Նա ձկնորսություն և անում կասպից ծովում, ծառայում և յերկաթուղում վորագես գիշերապահ ու կշռող։ 1891 և 1892 թվականներին նա չըջում է Պովոլոժյեն, Դոնը, Ռեկայինան, Բևսարաբիան, Ղրիմը և Կովկասը, ստանալով տպավորությունների հսկայական պաշար և անսպաս նյութ՝ հետազայի իր պատմքածքների համար։

Բնակություն հաստատելով Թիֆ-

լիսում և աշխատանքի մանելով յերկաթուղային արհեստանոցները, Գորկին բարեկամանում և իրեն մերձափոր բաննիրական յերիտասարդության չրջանի հետ և, մի քանի բնկերների հետ միասին, կազմակերպում և պրոպագանդիստական մի խմբակ, ուր հաճախում են յերկաթուղային բաննիրները և ուսանող յերիտասարդությունը:

Գորկին հենց թիֆլիսումն ել զբում
ե իր առաջին սրասմվածքը «Մակար
Չուզբան»:

Նիմնից վերադառնալով և աշխատելով մի քաստարանի մոտ, Գորկին մի շաբթ սրատմվածքներ և զետեղում տեղական թերթերում : Պատմվածքներից մեկի վրա ուշադրություն ե զարձնում զբող Կորոլենկոն, վորն այդ ժամանակ ապրում եր Նիմնիյում : Նա զառնում է յերիտասարդ զբողի ուշադիր զեկավարը՝ նրա զործունեցության առաջին քայլերի ընթացքում : Հենց նա ել տպում է «Առւսակոյե Բողոսավոյ» ժուրնալում Գորկու առաջին մեծ պատմվածքը՝ «Զելկաչը», և այդ ժամա-

նակից ի վեր Գուրկին հայտնի յեղառնում ընթերցողների լայն շրջաններում :

Առաջին սոմանտիկ յերկերին— «Մակար Զուզրային», մի բեզենդին այն մարգկանց մասին, վորոնք մահր դերադասել են ստրկությանը, «Տաղեցի յերզը» վրժածքին, վորը փառաբանում և «Քաջերի խենթությունը», «Պառավ Իզերզիլին» հաջորդեցին նաև ունալիստական պատմվածքներ, «Նախկին մարզիկ», «Զանձրույթից», «Կիրիլիկա» և այլըն, վորտեղ կծու վերլուծման և յենթարկվում դասակարգային հասարակություննը նրա շահագործական ելությամբ, մի հասարակություն, վորին զլխավորում և ազահ վաճառականը և վորտեղ ստրկամտություն և անում նրան հլու—հնազանդ քաղքենին: Իսկ «Վարինկա Ոլեսովա», «Զարաձնիները», «Սատանայի մասին», «Դարձյալ սատանայի մասին» պատմվածքները սաստիկ կերպով հարփածում են անզոր ու անձարակ լիրերալ ինտելիգենցիային, վորը յերկատվել եր իր ձղտումներում:

Այդ բոլոր պատմվածքները մեծ դեր
խաղացին 90-ական թվականների
հեղափոխական վերելքի պատմության մեջ, ողնելով հասարակության հեղափոխական տարրերին՝ ավելի պարզորոշ կերպով տեսնելու դասակարգացին թշնամուն և պայքարի վողեցնչելով սոցիալական հասարակարգը փոխելու համար :

Բանվորների ու հեղափոխական յերիտասարդության մեջ Գորկու ունեցած լայն հեղինակությունը ցարական կառավարությանը դրդեց միջոցներ փնտուել նրան «վնասազերծ» դարձնելու համար : 1901 թվականին Գորկուն ձերբակարեցին և արտաքսեցին գավառական Արգամաս քաղաքը, վորպեսզի հեռացնեն «անհանգիստ» դրողին դրսարանային կենտրոններից : Այդ հոնդամանքը չկրտրեց, իհարկե, Գորկու կապը կուսակցական կազմակերպություններից և 1902 թ., աքսորից վերադառնալուց հետո, նա կազմակերպված կերպով կազմում է հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի հետ, նրա «Իսկրա» թերթի հետ, վորը զեկա-

վարում եր Վլադիմիր Իլիչ Լենինը :
Մի տարուց հետո, սոցիալ-դեմոկ-
րատիայի այդ մասը կազմակերպեց
բոլշևիկների կուսակցությունը և
Գորկին ընդհուպ մտավ նրա աշխա-
տանքի շրջանակի մեջ : 1905 թվակա-
նի փոթորկահույզ որերին, Գորկին
հանդիսանաւմ է «Նովայա Ժիգն»
թերթի կազմակերպիչներից մեկը,
փորբ դառնաւմ և բոլշևիկների ա-
ռաջին լեզար որդանը և վաստորեն
խմբագրվում է Վ. Ի. Լենինի կող-
մից :

Գորկին մասնակցում է նաև Մոսկ-
վայի Դեկտեմբերյան ապստամբու-
թյան կազմակերպմանը, ողնելով
հեղափոխության սպառադինմանը և
մարտական զործողությունների, ծա-
վալմանը : 1906 թվականի սկզբնե-
րին, կուսակցությունը նրան հանձ-
նարարում է Ամերիկա ուղեորդել
փող հավաքելու՝ հեղափոխությանն
ողնելու համար : Այդ ագխտացիոն
ուղեորդության ընթացքում Գորկին
զրում է «Մայրը», իր ամենախոշոր
ստեղծագործություններից մեկը :
Հայտնի յէ, թե ինչպէս և դնահատել

Լենինը «Մայրը» դրվածքի հրատա-
րակումը և ինչողիսի նշանակություն
ունեցավ նա սուսական ոչ արեմբա-
յան պրոլետարիատի համար։ Արե-
մուտքում նա տարածվում եր միլի-
ոնավոր սրինակներով, վորովես
բանվորական թերթերի հավելված։
Ավելի բախտազուրկ եր սուս ընթեր-
ցող բանվորը։ Յարական կառավա-
րությունը յուրովի գնահատեց
«Մայրը»։ Նա բանագրավեց այն ա-
ռաջին ժողովածուն, վորտեղ լույս
եր տեսել զրվածքի սկիզբը, մյուս-
ների միջից դուրս հանեց հսկայա-
կան հատվածներ և բոլորովին թույլ
չովեց առանձին հրատարակել, այն-
պես վոր «Մայրը» ամբողջական
ձեվով լույս տեսավ Ռուսաստանում
միմիայն 1917 թվականի հեղափո-
խությունից հետո։ Ռեակցիայի հար-
ձակումը հարված հասցրեց նաև Գոր-
կու մյուս ստեղծագործություննե-
րին։ Երա մի շարք պատմվածքներն
ընդհանրապես չելին կարող լույս
տեսնել Ռուսաստանում, այն և՝
«Հունվարի 9-ը», «Պատրույլը»,
«Պատմվածքից», «Ռուսական թա-

դավորը» : «Թշնամիները» պիեսը
տպվեց , բայց «անպայման արգել-
ված» բեմադրելու համար : Նույն
պատճառով չեր կարող բեմադրվել
նաև «Վերջինները» պիեսը , իսկ «Ա-
վելորդ մարդու կյանքը» պատմված-
քից , վորը սպատկերում եր սպահնոր-
դական բաժնի որդանների գործու-
նեցությունը . թույլատրվեց սպադ-
րել միմիայն սկիզբը : Ուեակցիան
վրա հասնելուց հետո , Գորկին անց-
նում է քաղաքական վատրանդիու-
թյանը և , բնակություն հանտառե-
լով իտալիայում , շարունակում է
աշխատել նոր ստեղծադորձություն-
ների վրա :

1909—1910 թվականներին տպվե-
ցին նրա «Ոկուրով քաղաքը» , «Մատ-
վեյ Կոժեմյակինի կյանքը» հրաշալի
պատմվածքներ քաղքենիական կյան-
քի մասին : Այդ ժամանակից ի վեր
«Ոկուրովշինան» դառնում է այն
րթամիտ , ճահճացած ուժի հասարակ
անունը , վորը կաշկանդում եր հին
Ռուսաստանը և դանդաղեցնում եր
նրա ամեն մի առաջընթացը : Ցեղ ա-
պա , կարծես ի՞ հակակշեռ դրան ,

Գորկին գրում ե իր կենսուրախ «Հեքիաթներն Իտալիայի մասին», պրոլետարական համերաշխության մասին, աշխատանքի պաթոսի մասին։

Յերբ, սեակցիան թուլանալուց հետո, բոլշևիկներին հաջողվեց նորից կազմակերպել լեզու «Զվեզդա» թերթը, Գորկին մի քանի պատմվածքներ գետեղեց նրա մեջ և լենինը 1912 թվականին նրան դրեց՝ «Հոյտեկապ «Հեքիաթներով» դուք չառ և չառ սպնեցիք «Զվեզդային» և դա ինձ չափազանց ուրախացնում ե . . .»

1913 թվականին Գորկին խմբադրում ե բոլշևիկյան «Պրոսվեչենիե» ժուրնալի գրական բաժինը և այդ թվականից սկսում ե իր ինքնակենսագրական տրիլոգիան՝ «Մանկությունը», «Մարդկանց մեջ» և «Իմ համալսարանները»։ Դա հեքիաթային եպոսեյն եր այն մարդու, վորն ստեղծագործական կամքով հաղթահարում ե ոկուրովյան մթին կենցազը։

«Արտամանովների դործը», վորը լույս տեսավ արդեն հեղափոխությունից հետո, արդեն այլ սյուժեու

ունի : Դա կապիտալիստական մի տոհմի՝ Արտամանովների պատմությունն է, վորոնց դործը քայքայվում է բանվոր դասակարգի դարդացմանն ու աճմանը զուղընթաց :

Այդ սրոցեսը ընդհուպ մինչև հեղափոխությունը, վորը հիմնահատակ կործանեց Արտամանովների դործը, կապիտալիզմի դործը, Գորկին ցույց եւ տվել սոցիալական զարմանալի ճիշտ վերլուծմամբ : Վերջին տարիներին եւ պատկանում նաև մի չափարաված աշխատություն՝ «Կլիմ Սամզինի կյանքը» վեպը : Դա Ռուսաստանի վերջին տասնամյակների մտավոր ու սոցիալական կյանքի հանրագումարն է : Դա մի պոլեմիկ դործ է՝ վերին աստիճանի սուրսատիրայով :

Խորհրդային իշխանության տարիներին Գորկին տվել է հոկայական թվով հոգվածներ, վորտեղ հանդես է զալիս վորակես աշխարհիս առաջին պրոլետարական պետության պաշտպան, մերկացնում է նրա զրպարտիչներին, քարոզում է խորհրդա-

լին իշխանության հսկայական նրանք առաջանալու մասնաւոր է:

Իր հիանալի կյանքի հետապար բույր առարիները Գորկին նվիրում են հասարակական - քաղաքական յեռուն, բազմապիսի գործունեցության: Առօրհուրդների համամիութենական 5-րդ համազումարում նարնարվում է ԽՍՀՄ-ի Կենտկործկոմի անդամ: Գորկին, վորովես ԽՍՀՄի ության Առօրհրդային գրողների միության վարչության նախադահ, շատ ժամանակ և ուժ է նվիրել խորհրդային այնպիսի գրականություն ստեղծելու գործին, վորն արձանի լինի մեր մեծ գարաշընանին: Նրան եւ պատկանում «Քաղաքացիական» կոփիվների պատմություն», «Քարբիկների ու գործարանների պատմություն» ստեղծելու նախաձեռնությունը, վորոնց եջերում պատկերավորվում են բանվոր դասակարդի ու մեր յերկրի բոլոր աշխատավորների կյանքն ու հերոսական պայքարը հանուն իրենց ազատադրման, հանուն սոցիալիզմի:

«Բնկեր Գորկին, — գրում են Լե-

նինը 1909 թվականին, — իր գեղարվեստական մեծ յերկերով իրեն կառուց Ռուսաստանի և ամբողջ աշխարհի բանվորական շարժման հետ» : Շնորհիվ հեղափոխական պրոլետատարիատի և նրա ավանդաբարդի հետ ունեցած այլ հարազատ կապի, Գորկին նոր ուժեր և համաքում և յերիտասարդական վոզեորությամբ հանդես զալիս աճող պատերազմական վասնպի զեմ, զայրույթով հարձակվում և պատերազմի հրձիկների դեմ, պոկում և թշնամիների դիմակը, մերկացնելով Փաշիզմի իսկական զեմքը :

«Մաքում Գորկու անունը, — զրում եր Համ . Կ(բ)Կ Կենտրոնական կոմիտեն, պրոլետարական մեծ գրողի զրական՝ հեղափոխական-մարտական զործունելության 40-ամյակի առթիվ ուղարկած իր հեռագրի մեջ, — թանգ և ու մոտիկ խորհրդային յերկը աշխատավորների համար, և մեր յերկը սահմաններից դուրս, վորագիս մեծազույն արվեստագետի՝ հեղափոխականի, ցարիզմի դեմ, կատիտալիզմի զեմ,

հանուն միջազգային պրոլետարական հեղափոխության, հանուն կապիտալիսմի լծից բոլոր յերկրների աշխատավորների աղատադրման մարտընչողի անունը» :

Իր զասակարգի վառապանձ մարտիկ Գորկին իր կյանքն ու ստեղծագործությունը նվիրեց «Հուրախություն բոլոր աշխատավորների և իսկարսավորակության պատճենի թրչնամիների» (Ստալին) : Մեծագույն արժեաստագետ - ռեալիստ, հրարորդուք հեղափոխական Գորկին իր տաղանդի ամբողջ ուժով, իր վողք կյանքի ընթացքում, հաստատում եր մարդու վորպես յերկրի ամենազեղեցիկ ու ամենասքանչելի յերեռութիւնների մեծագույն կոչումը :

Ա. Մ. Գորկու զբական ամենահարուստ ժառանգությունը կազահվի անզասակարգ սոցիալիստական հաստրակության կուլտուրայի զանձարանում, հասարակության, վոր ստեղծում են միլիոնները՝ սոցիալիզմի հանձարեղ ճարատարապետ ընկեր Ստալինի զլիսավորությամբ :

«Խորհրդ. Հայաստ.»

1936, № 140, էջ 2.

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ

Դ Ե Ղ Ա Ռ Վ Ե Ս Ա Կ Ա Ն
ՅԵՐԿԵՐԸ

Է Խ Մ Խ Ի Բ ՅԵՐԿԵՐ : Հասոր 1—3 .
Թարդ . Արագի : Յերկան—Մոսկ-
վա , Պետ . Հրատ . 1932—1937 .

Հասոր 1 . Մանկություն : 233 էջ :

Հասոր 2 . Մասայության մեջ : 343 էջ :

Հասոր 3 . Խմ համալսարաններ : 156 էջ :

Պ Ա Մ Խ Մ Վ Ա Տ Ք Խ Ե Բ : Հասոր
1—II . Խմբ . Ստ . Զորյանի : ՅԵՐ . ,
Պետ . Հրատ . 1928 . 130+110 էջ :

Հասոր 1 . Մարսիմ Գորկի : [Կյանքը] և
գրական գործունեյությունը] :—Մի ան-
դամ աշնանը : Թարդ . Ստ . Շահումյան .
—Խմ ուղեկիցը : Թարդ . Ա . Արայան :—
Բնթերցող : Թարդ . Զ . Զամբագյան :—
Տափաստանում : Թարդ . Զ . Զամբագ-
յան : — Զանձրութից : Թարդ . Զ . Զամ-
բագյան : — Բնկերներ : Թարդ . Զ . Զամ-
բագյան :

Հասոր II . Դանկոյի սիրոր : — Բոլես : —
Խանը և իր վորդին : — Զարսճճի :—
Յելկաչ : — Արխիոլ պատը և լենկան :

Հ Ե Ք Ի Մ թ ն ե ր : Խմբ . Սիմա-
կի : ՅԵՐ . , Պետ . Հրատ . 1928 .
48 էջ :

Բ ո վ ա ն դ . Հեքիաթ : Թարդ . Ազման : — Ամեն աեղ և : Թարդ . Սիմակ : — Մարդր : Թարդ . Ա . Տ -Հովհաննյան : — Զառկվա Հեքիաթ : Թարդ . Սիմակ : — Կյանքի Հեքիաթներից : Թարդ . Սիմակ : — Բնելեր : Թարդ . Ա . Տ -Հովհաննյան : — Հեքիաթ : Թարդ . Ա . Խռավյան :

Պ ա տ մ վ ա ծ ք ն ե ր : Գրքույկ
Ա - Բ : Թարդ . Ջ . Զամբագյանի :
Թիֆ . 1904 . 80 + 47 էջ :

Գրքույկ Ա . Մաքսիմ Գորկի : (Կենսագր.) : —
Բնթերցող : — Տափառանում : — Զանձ-
րույթից :

Գրքույկ Բ . Մի անդամ աշնանը : — Խանը և
իր վորոբն : — Բնելերներ :

Կ լ ի մ Սամզինի կյանքը : (Քառա-
սուն տարի) : Վեպ : [Հատոր] I .
Թարդ . Ա . Աքայան : Յերեան-
Մոսկվա , Պետ . Հրատ . 1935 . 574
էջ :

Մ ի անդամ աշնանը . . . [Պատմվածք] :
Թարդ . Ա . Շահումյան : Թիֆ .
1901 . 18 էջ :

Մ ա յ ր ը : [Վեպ : Գիրք 1] . Թարդ .
Բ . Քաքանիյան : Մոսկվա , «Մուրճ
և մանդաղ» Հրատ - չություն :
1923 . 309 էջ :

- Յ ե ր ի ո ւ պատմվածք : Թարդ .
Հակոբ Հակոբյանի : Թիֆ . , Հրա-
բատ . տպագրական բանկութների :
1914 . 15 եջ :
- Ա մ ա յ ի գաշտում : [Պատմվածք] :
Թարդ . Սարգիս Մ . - ի սհակյանի :
Աղեք-ողոլ : 1902 . 31 եջ :
- Զ ե լ ի աշ և Հին ժամանակի պատ-
մություններ : [Պատմվածքներ] :
Թիֆ . 1903 . 86 եջ :
- Դ ա ն կ ո յ ի սիրութ : Պառավ Ի-
շերդիլի զրույցներից : [Պատմ-
վածք] : Թարդ . Արշակ Աքայան :
Թիֆ . 1904 . 16 եջ :
- Ե մ ուղեկիցը : [Պատմվածք] : Թարդ :
Արշակ Աքայան : Թիֆ . 1904 . 63
եջ :
- Զ ա ր ա ճ ճ ի : [Պատմվածք] : Թարդ .
Արշակ Աքայան . Մ . - Պետեր-
բուրդ : 1905 . 45 եջ :
- Յ ե ր ի տ ա ս տ ր դ գրողը : Մար-
դը : [Պատմվածքներ] : Մոսկվա ,
ԽՍՀՄ Ժող . կենտր . Հրաբատ .
1926 . 35 եջ :
- Ք ա ն զ ե ց և մեկ : [Պատմվածք] :
Մոսկվա , ՀԽՍՀ Պետ . Հրաբատ .
1926 . 29 եջ :

Ա. բ ա տ ո ս վ ո ւ ր ը : [Պատմ-
վածք : Թարգ . Ա. Տեր-Հովհանն-
յան] : Մոսկվա , ԽՍՀՄ Ժող .
կենտ . Հրատ . 1927 , 55 էջ :

Մ. բ ր կ ա չ ա վ ի յերպը : Բաղեցի
յերպը : Բնկերը : Ծերունին :
[Պատմվածքներ] : Մոսկվա , ԽՍՀՄ
Ժող . կենտր . Հրատ . 1927 . 23 էջ :

Պ ե շ կ ո վ ը : [Հասոված «Մաքսիմ
Գորկու կյանքը» դրքից] : «Թարգ-
մանական պատմվածքներ» դըր-
քույկում : Պրակ 1-ին , Յեր . ,
Պետ . Հրատ . 1929 , եջ՝ 3—18 .

ՇԱՀՈՒՄՅԱՆ , ՍՏ . և ՄՈՎԼՅԱՆ , Ա. Մաք-
սիմ Գորկի : (Թարգմանություն-
ներ և Հողվածներ) : Յեր . , Պետ .
Հրատ . 1936 . 120 էջ :

Բ ո վ ո ն զ . Յերկու խոսք : Գ-
Հովհաննի : — Թարգ զ մ ա ն ո ւ-
թ յ ո ւ ն ն ե ր : Մի անդամ աշնանը :
Թարգ . Ա. Շահումյան : — Հեքիաթ :
Թարգ . Ա. Մուսվյան : — ՀԱՐԻԱՅԻ :
Թարգ . Ա. Մուսվյան : — Հ ո վ ա ծ-
ն ե ր : Ա. Շահումյան : Մ. Գորկու մա-
սին : — Ա. Մուսվյան : Գորկու հեքիաթ-
ները :

ՄԱՐԱՒՄ ԴՈՐԿՈՒ
ԳՐԱԿԱՆ-ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ
ԳՐՎԱԾՔՆԵՐԸ

Խ ո ր հ ր դ ա յ ի ն պ րականու-
թյան մասին : Զեկուցում Խոր-
հրդ : ղրողների համամիութ .
1-ին համազումարում : Յեր . ,
Պետ . հրատ . 1934 . 189 էջ :

Վ ա տ դ ի մ ի ր Իլյիչ Լենին :
Թարդ . Դ . Արովի : Յեր . , ՀԿ(բ)կ
կկ ազիտ-բաժին : 1924 . 15 էջ :
Ե ռ ւ յ ն ը՝ Թարդ . Վ . Փ . Յեր . ,
Պետ . հրատ . 1931 . 86 էջ :

Ա մ ր ո զ յ աշխարհի բանվորները
և գյուղացիները ոլեաք և ազա-
տեն իրենց կապիտալի իշխանու-
թյունից : Մ . Գորկու դիմումը
բանվորներին և գյուղացիներին :
Կրասնոգար : 1930 . 8 էջ :

Յ ե թ ե թշնամին անձնատուր չի
լինում նրան վոչնչացնում են :—
Բանվորներին և գյուղացիներին :
Յեր . , Պետհրատ . 1930 . 16 էջ :

Մ տ ք ե ր : Թարդ . Հով . Ստեփան-
յան : Շուշի : 1903 . 18 էջ :

Ձ ս ր մաւ ի զ մ ի մասին: «Խորհրդական Հայաստան» 1936, № 87, էջ՝ 3—4.

Գ լ ա կ ան բարքերի մասին: «Խորհրդական Հայաստան» 1934, № 141, էջ՝ 2—3.

Կ ն ո ջ մասին: «Խորհրդական Հայաստան» 1934, № 109, էջ՝ 2—3, № 210, էջ՝ 2—3.

Մ ե ն ք պետք է հիշենք թե ինչպես եր վերաբերվում լեզվին և նինը: «Խորհրդական Հայաստան» 1934, № 48, էջ՝ 2.

Մ ե ծ ձշմարտության տարածողները լինել: Մ. Գորկու յելույթը Քաղբաժնների թերթերի խրճառիրների խորհրդակցությանը: «Խորհրդական Հայաստան» 1933, № 201, էջ՝ 2—3.

Հ ա ն ը ի Բարբյուսի մահվան առթիվ: «Խորհրդական Հայաստան» 1932, № 202, էջ՝ 1.

«Զ ի ն վ ո ր ա կ ա ն գաղափարների» մասին: «Խորհրդական Հայաստան» 1932, № 224, էջ՝ 2.

Խ Ա Հ Մ «մեխանիկական քաղաքացի-

ներին» : «Խորհրդ . Հայաստ .»
1928, № 241, № 242.

Հ ա ղ թ ա կ ա ր է ն ք բնության
տարերքի ու անցյալի տարերքը :
(Դնեպրոստրոյի բացման առ-
թիվ) : «Խորհրդ . Հայաստ .»
1932, № 243, էջ՝ 1.

ԻՆՉ ԿԱՐԴԱԼ
Մ Ա Ք Ս Ի Մ Գ Ո Ռ Կ Ո Ւ
ՄԱՍԻՆ

Լ. Ե ն ի ն ը՝ Մաքսիմ Գորկուն։ [Նա-
մակ, զրված 16/XI 1909թ.]։
«Խորհրդ։ Հայտու»։ 1932 ։
224, Էջ՝ 1.

Լ. Ե ն ի ն ը և հ. Մաքսիմ Գորկին։
«Խորհրդ։ Հայտու»։ 1932, №
224, Էջ՝ 1.

Ք ա ռ ա ս ս ւ ն տարիքա ծառայու-
թյուն պրոլետարական հեղափո-
խությանը։ («Պրավդա»-ի ա-
ռաջնորդողը, համառոտած)։
«Խորհրդ։ Հայտու»։ 1932, №
226, Էջ՝ 2.

ԱՏԵՑԿԻ, Ա. Մաքսիմ Գորկի։ (Ճառ՝
արտասանված Մ. Գորկու զրա-
կան-հեղափոխ։ 40-ամյա հորել-
յանի առթիվ կայացած հանդի-
սավոր նիստով)։ «Խորհրդ։
Հայտու»։ 1932, № 320, Էջ՝ 2.

ԱԽՐՊՈՏԻՆ, Վ. Գորկին — պրոլետա-
րիատի մէծ արվեստագետ։ «Գր-
բական թերթ»։ 1932, № 21, Էջ՝
1—2.

Առևտն, Առևտն : Մաքսիմ Գորկին հարվածային : «Խորհրդական» 1932, № 224, էջ՝ 2.

ԿԱՅԵՆ, ՄԱՐՍԵԼ: Սովորեցեք Գորկուց:
«Խորհրդ՝ Հայաստ.» 1932, №
224, էջ՝ 2.

ՊԱՎԵՆԿՈ, Պ. Ռուսական դրականության գործիքականության վորոշիչը : «Խորհրդական հայաստան» 1932, № 225, էջ՝ 2.

Վ ս զ ջ ու յ ն Գորկուն : [Առաջ-
նորդող] : «Խորհրդ» . Հայաստ .»
1932 . № 224 , եջ՝ 1 .

Պ Ա Ր Ա Խ Ա Վ Ա Ր Ի Մ Ե Ծ Ա Ր -
Վ Ե Ա Ս Ա Վ Ե Մ Ը : («Պ Ր Ա Վ Դ Ա »-ի Հ Ո Ւ -
Ն Ի Մ Ւ 19-ի Ա Պ Ա Ձ Ե Ա Ր Գ Ա Ղ Բ) : «Խ Ո Ր -
Հ Ա Ր Դ . Հ Ա յ ա ս տ . » 1935 , № 141 ,
Է ջ՝ 1 .

ՄՈԼՈՏՈՎ, Վ. Մ. Ճառ՝ Մաքսիմ Գորկու թաղման առթիվ։ «Խորհրդայաց» 1936, № 142, էջ՝ 1.

ԲՈՒԼԳԱՐՆԵՐ, ի. Ճառ՝ Մաքսիմ Գորկու
մահվան առթիվ։ «Խորհրդ. Հա-
յաստ.» 1936, № 142, էջ՝ 1.

ՏՈՒՍՏՈՅ, ԱԼԵՔՍԵՅԻ: Ճառ՝ Մ. Գորկու
թաղման առթիվ: «Խորհրդ», Հա-
յաստ., 1936, № 142, էջ՝ 1.

Պ ը ո լ ե տ ա ր տ կ ա ն պ րակա-
նության մեծ վարպետը : [Առաջ-
նորդող] : «Խորհրդ . Հայաստ .»
1936 , № 140 , էջ՝ 1 .

ԳՅՈՒԼԻ-ՔԵՎԵՅԱՆ , Հ . Մաքոխմ Գորկի :
«Խորհրդ . Հայաստ .» 1936 , №
140 , էջ՝ 2 .

ՅԵՍԱՅԱՆ , ԶՈԲԵԼ : Մեր պրականության
մեծ վարպետը : «Խորհրդ . Հա-
յաստ .» 1936 , № 140 , էջ՝ 2 .

ԶՈՐՅԱՆ , ՍՏ . Արաթուիչ մրրկահամբ :
«Խորհրդ . Հայաստ .» 1936 , №
140 , էջ՝ 3 .

ԳՐՈՒԶԴԵՎ , Ի . Մաքոխմ Գորկու կյան-
քըն ու արկածները : ՅԵՐ . Պետ-
հատ . 1928 , 203 էջ :

ՇԱՀԱԲԻՄՅԱՆ , ՍՏ . և ՄԹԱՎԵՅԱՆ , Ա . Մաք-
ոխմ Գորկի : (Թարգմանություն-
ներ և հոդվածներ) : ՅԵՐ . Պետ-
հատ . 1936 , 120 էջ :

Բ ո վ ա ն զ .՝ ՅԵՐԿՈՒ խոսք : Գ.
Հովհաննի : — Թ ա ր դ մ ա ն ո ւ-
թ յ ո ւ ն ն ե ր : Մի անդամ . աշնանը :
Թարդ . Ա . Շահամյան : — Հեքիաթ :
Թարդ . Ա . Մոավյան : — Անքիաթ :
Թարդ . Ա . Մոավյան : — Հ ո վ ա վ ա ծ -
ն ե ր : Ա . Շահումյան : Մ . Գորկու մա-

սին: — Ա. Մռավյան: Գորկու Հեղիսթ-
ները:

ՀՈՎՆԱՆ, ԳՈՒՐԳԵՆ: Ստեփան Շահում-
յանը և Մաքսիմ Գորկին: Յեր.,
Պէտ. հրատ. 1934. 117 էջ:

Բ. Ռ. Պ. Հ. Պ. Շահումյանը և Մ.
Գորկին: — Ստալին (Ստ. Շահումյան):
Գրական դիտողություններ Գորկու մա-
սին: — Լենին, Վ. Ի. Նամակներ Ստ.
Շահումյանին և Ժ. Գորկուն:





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

ԼԵՆԻՆԸ Մ . Գորկու մասին . . .	5
Վողջույններ Մ . Գորկու դրա- կան-հեղափոխական դործունե- յության 40-ամյա հորելյանի առթիվ	6—8
Ընկ . Ստալինի վողջույնը	6
Համեր(բ)կ Կենտկոմի վող- ջույնից	6
ԽՍՀՄ Ժողկոմխորհի վող- ջույնից	7
Մոսկվայի ընկ . Ստալինի անվան Առաջին ավտո- գործարանի բանվորների վողջույնից	8
Մ . Գորկու մատչել	9—17
Համեր(բ)կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի մա- հագուլ	9
Հատվածներ Վ . Մ . Մո- լոտովի ճառից	10
Հատվածներ «Պրավդա»-ի առաջնորդողից	14

Հասովածներ Առմեն Ռուլա-	
նի նամակից	16
Մ. Գորկու Համառոտ կենսա-	
գրությունը	18
Մ. Գորկու գեղարվեստական	
յերկերը	33
Մ. Գորկու գրական-հրապա-	
րակախոսական գրվածքները	37
ինչ կարդալ Մ. Գորկու մա-	
սին	40



Պատվեր № 47

Գլանվիտ № 2282

Տիրաժ 1500

Հանձնված և արտադրության 16/VI 1937 թ.

Ստորագրված և տպագրելու 20/VI 1937 թ.

ՀԿ(թ)կ ԿԿ երատարակչության «Խորհրդա-
յին Հայաստան»-ի տպարան, Ցերեան



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045315

[124.]

352

9160 15 4.

A I
8446

Великий художник
пролетариата
МАКСИМ ГОРЬКИЙ